

ԱՐԵՒԵԼԱԳԵՏՔ ՅԵՒՐՈՊԱ

(Տես յէջ 294)

Արևմտեան ազգաց մէջ թերևս ամենէն յառաջ և բազմազգի յարաբերութիւններ ունեցած է իտալիա՝ մեր աշխարհի և ժողովրդեան հետ։ Վենետիկ, Գենուա, Պիզա՝ Ռաբի նեանց ժամանակէն ի վեր, ինչպէս պատմութիւնք և յիշատակարանք կ'աւանդեն, դէպ յարեւելս արշաւանաց առիթներով՝ մուտ գըտած են շահավաճառի և տուարաց պատճառաւ ի հանգրուանս և ի քաղաքս Կիլիկիոյ, ուր և բնակութիւնսին հաստատելով, փոխադարձաբար նոյն և նոյնպիսի առիթներով անցեր են և ազգայինք մեր յիտալիա։ Միայն երեսուցամէկ և աւելի իտալիոյ գանազան քաղաքաց մէջ՝ այլեւայլ հոգեսունք և եկեղեցիք Հայոց կը յիշատակուին, և ոմանք դեռ եւս կանգուն, յորոց հնազդանն ի 1240, շարունակելով մինչև չորքստասներորդ դարուն վերջերք։ Եւ թուով բաւական ստուար, ճոխ և պատուաւոր գաղթականութիւնք ի բազմաշահ և ի մեծանուն քաղաքս, ի Հոսլմ, Վենետիկ, Լիւսոնոյ և այլուր, ուր և ազգային սպարանք և հաստատութիւնք։

Ասոնք արդէն ծանօթ են մեր բանասէր ընթերցողաց։ Բայց այսչափ յաճախեալ յարաբերութեամբ ալ, համեմատաբար քիչ եղած են իտալական ժողովրդեան մէջ՝ հայկական լեզուի գրականութեան և պատմութեան ուսմամբ զբաղողք, թէ մեզմէ քանի մը դար յառաջ և թէ արդի ժամանակաց մէջ։ Առաջնոց թուոյն մէջ կրնանք անցընել՝ զՍորբենա տաքին Էդեմէս Գալանոս, որոյ անուան և նկատմամբ մեր լեզուին և պատմութեան զբուռածոց յիշատակութիւնն բրած ենք արդէն։ Իրեն քրժակից ունէր քանի մի համակրոն հա-

մազդիք, ի հարկէ չափով մը տեղեակք նաև մեր լեզուին, թէպէտ, և մասնաւոր ու յաւկանէ յառուանէ յիշատակութեան մը հանդիպած չըլլանք։ — Տիմոթէոս Գառնուկ, կամ իրենց լեզուով Agnellini, եպիսկոպոսի անուն մ'ալ կը գտնենք ի գլուխ Դաշանց քղերոյն հայ տպագրի և իտալական թարգմանութեան հրատարակելոյ ի Պազուա իտալիոյ յամի 1690, նոյնպէս և Հաւատով խառտովանիւմ աղօթից Շնորհալույն բնագրին և թարգմանութեան յիտալական՝ ի նմին ամի թէպէտ չենք կրնար որոշակի ըսել թէ ո՛ր ազգին կը վերաբերի այս անձն, բայց որովհետև իրեն ձեռքով եղած թարգմանութիւն մ'ալ տեսեր ենք յիտալ լեզու արևելեան առածից, հաւանականաբար հայազգի եպիսկոպոս մ'է նա։

Յամի 1745՝ նախահայր Ուխտիս ի Մութոնէ Պեղոպոսիկայ կ'անցնի իւրովքն և կը հաստատուի ի Վենետիկ, ուր զարեբէ ի վեր կայր արդէն բազմաթիւ և պատուաւոր հայ գաղթականութիւն մը՝ ազգային եկեղեցեաւ և քահանայիք։ Բայց ինչպէս յառաջ՝ և ոչ ալ անկէ ետքը՝ հայ լեզուի ուսման նկատմամբ փոյթ մը չենք գտներ, ոչ ի Վենետիկ և ոչ այլուր առ իտալացիս։

Իսկ երբ դարուս սկիզբը իտալիան պետութիւն մը կազմուեցաւ՝ արդէն ինչուան այն ատեն գտնուող այլեւայլ պետութեանց ու հասարակապետութեանց ի մի ձուլմամբը՝ մե-

† Proverbi utili e virtuosi in lingua araba, persiana e turca, gran parte in versi con la loro spiegazione in lingua latina ed italiana, raccolti da Timoteo Agnellini. Padova, 1688.

ծին Նապոլէոնի խելգախ արշաւանօրն և յաղթանակօք, յընդհնուր տեսչէ համալսարանին Պալոյ, ի Յովսեփայ Հագէր (Joseph Hager) աղբրագիր մը կը գտնենք մատուցուած առ Եղեկեմիոս Բոհառնէ փոխարքայ Խապիոյ ի 1809 ի զեկտ. 20. սրոյ մէջ յիշեցնելով ինչուան այն տոնն անծանօթ մնացած Հայ պատմաց և պատմութեան կարեղութիւնն, և թէ յիսալիս՝ և մանաւանդ ի վենետիկ կը գտնուին կարող և ձեռնհաս անձինք և հայկական տպարան՝ երգրական լեզուով մը այգ պատմիչներն ուսումնական աշխարհի ծանօթացընելու, կ'առաջարկէր որ կառավարութիւնն պէտք եղած ջանքն ու ծախքն ընէ՝ անոնց թարգմանութեան և հրատարակութեան:

Այս աղբրական առաջարկութեան անպորժարելի ձեւը՝ յայտնի նշանակ մ'է որ Գաղղիոյ կառավարութիւնն հարկ չ'ամաբեցաւ, կամ քաղաքատիկ գործառութեանց և զբաղմանց մէջ ժամանակ չ'ունեցաւ լուրջ նկատուողութեան անուշ զայն քայն քայն զի յառաջ, 1786 ին, աշխուստունմ և ուսումնասէր ազգային մը, Յովհաննէս մարկիզ Սեղբոսեան, իտալացի ճարտար և բազմաճիւղ գրչի մը շարագրութեամբ՝ մեր ազգին վրայ ինչուան նոյն ատեններն իրեցած գրութեանց մէջ ընտրելագոյնն և ճշմարտանաուն հրատարակեց յիտալական լեզու, Հայ աշխարհի հին պատմութեան, մասնաւորութեան և աշխարհագրութեան վրայ, թէպէտ աւելի եռանդուն սրտի և որդոյ ուղաւորութեանց անաւելով տեղ տեղ, և ոչ միշտ ասողջ քննադատութեան:

Բայց այս գրութեան երևնալէն ետքն ալ՝ հայագիտութիւն՝ նշանաւոր քայլ մը յառաջագնացութեան չ'աջողեցաւ ընել յիսալիս: Այդ ջանից և փութոյ աստիճանութիւնը՝ արժանապէս կը պատկանի վենետիկցի բարանայի մը, Յովսեփայ Կապէլլետտի (1810—1876): Գեռ եկեղեցական դարձարանի մէջ՝ իր տամանց ընթացքը կատարելու հետ էր, երբ ձեռքն ինկաւ Զախլախեան վարդապետին հայ և իտալական բազմալեզու աստիճանութիւն, և ի գլուխ գրոցն դրուած հայ քերականութեան համառոտութիւնը. առաջարկեց որ շնորհուին իրեն այն թերթը, խոստանալով ուսանել զլեզուն. և սուս քիտ յորայ

հաստատուն կեցաւ, անխնայ և յարատե ջանիք պարագիւրով քանի մը տարի շարունակ յաւումն և ի հմտութիւն հին լեզուին:

Իր ուսմանց առաջին ճաշակն ընծայեց յամի 1829 թարգմանելով ի լատին Շարահալի հայրապետին թուղթն առ համօրէն հայաւեսե ազնիւ. և այդ ձեռնարկին յաջողութեամբն և ընդունելութեամբ խրախուսուած՝ նոյն սուրբ հայրապետին ուրիշ թղթերն թարգմանեց ի լատին, և երեք տարիէն (1832) հրատարակելով տպագրութեամբ նուիրեց Հոսիմայ սրբազան քահանայապետին Պիոսի Ը: Նոյն ատեններն հրաւիրուելով ի Գերնուս Խապիոյ ի քարոզութիւն քանին Աստուծոյ, նոյն քաղաքին Սրբոյն Բարթոլոմէոսայ առաքելոյ նուիրուած և Հայոց վերաձայնեալ եկեղեցոյն մէջ, ուր՝ ըստ աւանդութեան կը պահուի և կը մեծարուի Քրիստոսի Տեսուն մերոյ առ Աբգար զրկած դատաւան, մասնաւոր ներքաղու պատուելով զուրբ առաքելայն Հայոստանեայց, հռչակ ունեցաւ իր հայկական օգնմանց հմտութեամբ:

Այս փորձերէն ետքն էր որ մտածեց հայ պատմագրաց հնագունից և կարեւորաց երկասիրութեանց իտալական թարգմանութեամբն զբաղիլ, ու Սարտենիոյ Կարլոս Ալբրտ Թագաւորին ընծայելով, քննել զործը անոր արքունական պաշտպանութեան ներքեւ, դրամական նպատից օժանդակութեան ակնկալութեամբ ալ և Հայ պատմագիրքը Երոպոյոյ ծանօթացուցած ասուն՝ անհրաժեշտ էր և զՀայաստան ծանօթացընել իր հնախօսութեամբն ու քաղաքական ու զինուորական օրէնքներալ ու սովորութեամբք: Այս վախճանաւ յօրինած և հրատարակած է հեղինակն եռահատոր Հայաստան (L'Armenia) կոչուած երկասիրութիւնն, որ՝ ինչպէս ինքն աշխատասիրոյն յառաջբանին մէջ կը ծանուցանէ՝ ինձինեան վարդապետին Հնախօսութիւն Հայաստանեայց կոչուած գրքին համառոտութիւնն է: Սուրբ պարգև մ'էր զոր կ'ընծայէր բոլորնալկ ուսումնասէր արեւմտից. և զրեթէ հաւատարապէս օգտակար ծառայութիւն մը զոր իրմէ յառաջ կը մատուցանէր համբաւեալ արեւելագէտն և հայագէտն Սէն-Մարտէն իւր Յիշատակարաններով: Տարակցս չկայ որ չէր

գերծե և ի թերութեանց ինչ. բայց անոնցմով վաստակաւոր հայագիտին արդիւնք և գովութիւն չեն նսեմանար:

Այս երկասիրութեան հրատարակութենէն քանի մը տարի յառաջ արդէն տպագրութեամբ ի լոյս ընծայեր էր Եղիշէի և Խոռնեացոյ պատմութիւնը (1842) յիտալական լեզու. յետոյ Բերկաստեղի եկեղեցական պատմութեան նոր տպագրութիւն մը և ամբողջ հարիւր տարուան շարունակութիւն (1844), յետոյ ի նմա ըստ Իւրաքանչիւր դարուց նաև հայ եկեղեցոյ պատմութեան գլխաւոր և հետաքննական անցքը, և մասնաւոր ու հմտական երկար տեղեկութիւններ աւելցնելով այն պատմական դիպուածոց կամ եկեղեցական ազգային խնդրոց՝ որ խնդրակներ համարուած են: Ասանկ Աբգարու առ Քրիստոս գրած և ի նմանէ ընդունած թղթոց վաւերականութեան չափուն, դաստառակին աւանդման և ցարդ գոյութեան, թաղէի ու Բարթողիմեայ քարոզութեան և նահատակութեան ի Հայս միենելի կարծեաց և հաւանականութեան, և այլն: Նոյն գրուածքն յետոյ աւելի ընդարձակելով ու ճոխացնելով՝ նոր կերպարանաց տակ սկսաւ հրատարակել ի Փլորենտիա, և որ անկատար մնաց տպագրապետին սնանկանալուն պատճառաւ:

Այլևայլ օրագրական յօդուածներ ալ հրատարակած է իտալեան զանազան բանասիրական հանդիսից մէջ՝ մեր ազգին և պատմութեանց տեսակիսով, յորոց զմանաւ և մեզի ծանօթներն նշանակեմք.

Regno dell'Arm. (Cosmorama pittorico di Milano, 1840, թիւ 84):

Colpo d'occhio di Siria. (Անդ, 1840 թիւ 50):

Lettere, scienze ed arti degli antichi Arm. (Անդ, 1841 թիւ 12):

Poesia armena, *Il naufrago nel mare di Van*. (Vaglia di Venezia, վեցերորդ տարի, թիւ 24):

S. Giovanni d'Acri. (Cosmorama, տարի 1. թիւ 1):

Mechitar Abate di Pietro. (Cosmorama, տարի 1. թիւ 8):

Invenzione dei caratteri armeni (?)

Semiramocerta o Van (?)

Riti funebri degli Armeni (?)

Abgaro, primo re Cristiano (Giornale Eccl. di Milano 1840).

Patriarcato di Armenia (Անդ, 1840).

Terza lettera di S. Paolo ai Corinti

(Անդ, 1840).

Gli eretici Pauliciani (Անդ, 1841).

Santa Ripsima vergine martire e sue compagne. (Անդ, 1841):

Կապելլեատիի ժամանակակից է ուրիշ իտալացի հայագետ իշխանական անձ մը, Լուկա քաղաքին զուրջ Կարոլոս Աբբատ, որ մասնաւոր սէր մը ձգելով մեր լեզուին ուսման և պատմութեան, տարիով հետամուտ եղաւ՝ հմուտ ու ազգային ուսուցչի մը առաջնորդութեամբ: Բայց խռախոյ 1848ին յեղափոխական շարժումն վրայ հասնելով, ստիպեցաւ հրաժարիլ իշխանութենէն ի շնորհս որդւոյն, որ և նա չեղաւ բարեբաստիկ՝ ժառանգած փոքրիկ իշխանութեան ամբողջ վերայ, բռնամահ կորուսանելով զայն:

Ասոցմէ ետքը և աւելի նորագոյն և մեզի ժամանակակից իտալացի հայագիտաց թուոյն մէջ մասնաւոր յիշատակութեան արժանաւոր է ուսուցչապետն Եմիլ Տէգա: Հիմնութեան հետ գրականական մեծ գովելի համեմատութիւն եւրեցնելով՝ շատ կարգացող ու սրբատու, բայց քիչ գրող մ'է, և գրուածքն են համառօտ՝ բայց հիմնութեամբ լի: Ուսումը ի վիճինաւ առած է, ու սանաբքիտ լեզուի ու համեմատական բանասիրութեան ուսուցչապետ եղած ի համալսարան Պոլոնիոյ, Պրիպ և Պագուայի: Հայկական ուսմանց վերաբերեալ իր մեզ ծանօթ գրուածներէն առաջին կը կարծենք Ազատանգեղոսի Փլորենտիոյ Լարենտեան գրքատան մէջ գտնուած յոյս օրինակին տարբերութիւնները և հայերենին հետ ունեցած նմանութիւնները: Նոյն նիւթոյն վրայ տեղեկութիւններ իր ուրիշ բանախօսութեան մէջ՝ զոր Հայկական կը կոչէ (Cose Armene), և որ տպագրուած է ի Հասագման գործոց վեցնուոյն գիտութեանց, դպրութեանց և արտեստից կամաքին (Atti del R. Istituto veneto di scienze, lettere ed arti, շար է, հատոր Ա յէջ 897-921), յորում կը

խօսի Հայկական հին քարգմանորէիներ նո-
րատիպ գրոց վրայ, Նորայրի Քննասեր թեր-
թից, և մանաւանդ՝ ինչպէս ըսինք, Ազա-
թանդեղոսի յոյն բնագրին վրայ՝ զոր տպա-
գրութեամբ հրատարակած էր Պաւլ Դըլա-
պարտ։ Մանգակունւոյ մէկ ճառին իտալական
թարգմանութիւնն ըրած է և տպագրած։ (Una
lettera di Giovanni Mandacuniese —
Atti e Memorie della R. Accademia di
scienze, lettere ed arti di Padova
1889-90, Հատ. 2. 153-167։ Նեմե-
սիոսի հայկական թարգմանութեան վրայ ալ
քննադատական տեսութիւն մը յորինած է,
և միենեւեղ կածառին զործոցը մէջ տպա-
գրած, որ առանձին հրատարակութիւն ալ ունի։
Ասոնցմէ ետք հրատարակած է « Չվեցօրից
Գեորգայ Պիսիդիայ » ըստ հին հայկական
քարգմանորէի » . Dell'Essamero di
Giorgio Piside, secondo la antica ver-
sione armena ; 1893 .

Հելլեն իմաստասիրաց հատընտիր բա-
րոյական առածք քարգմանեալք ի հայոց
(Delle sentenze morali di filosofi gre-
ci, scelti e tradotti da Armeni ; 1893 .

Եղիշէի պատմութեան գրոց ոչ անոր նո-
րագոյն տպագրութեանն ի Մոսկոս քննա-
դատութիւն մը, ի 1893 .

Ասոնց նման համառօտ՝ բայց ուրիշ լուրջ
գրութեանք։

Իտալացի հայագիտաց թուոյն մէջ կրնանք
սեպել նաեւ զկարլոյ Մորատտի ուսուցիչ Լա-
տին և յոյն գրականութեան՝ Պաւլոյ Ուզոյ
Փոսկոյոյ վարժատան մէջ։ Իմաստուն բանա-
սերս 1885 թուականին հրատարակեց Հայ
և Հնդկի-հնդկական կուլուած տեսարակ մը,
52 էջ, տպագրեալ ի Բերգամոյ . յորում այր-

ուբենի կարգաւ կը խօսի ստուգարանութեանց
վրայ, ցանկով մը՝ որ դիւրութիւն կ'ընծայէ
հետաքնին բանասիրաց։ Դժբաղդարար այս
ստուգարանութիւնք մեզի կը թուին թէ հաս-
տատուն հիմանց վրայ չեն՝ ինչ որ կը պա-
հանջէ մեր այսմօւ լեզուաքննական ուսու-
մը։ Մորատտի հնդկական է դարձեալ Ուսու-
նասիրութիւնք ի վերայ հին իտալական
լեզուաց կոչուած (Studi delle antiche
lingue italiane, 1887), և Ռոմանական
լեզուաց մէջ՝ նախադասին հիմունք (Fondi
Antelattini nelle lingue romanze, 1889,
ի Պաւլ, մասն Ա, էջք 54)։ Բուզգէի
ստուգարանական ուսումնասիրութեանց վրայ
խօսած ատեննիս՝ արդէն առիթ ունեցանք
այս խնդիրը յուզելու։ Հոս միայն այս ալ յա-
ւելումը ըսել, թէ հայկական լեզուի նկատ-
մամբ կը գտնենք իտալոյ մէջ հրատարա-
կուած համեմատական բանասիրութեան վրայ
այլեւայլ տեղեկութիւններ Ասկոլիի և այլոց
գրութեանց մէջ, (Studi critici, Տուրին,
1877), որոնց և գերման թարգմանութիւնն
ըրած են Ռայնհարտ Միլլըրովի և Բեռնարդ
Մանկոյի, (Kritische Studien zur sprach-
wissenschaft von G. P. Ascoli, Wei-
mar, 1878, էջք 14-418, ուր քառասուն
և երկու հայկական բառից կամ յետադաս
վանկերու (suffixe) խնամով քննաբանու-
թիւնք։

Յիշենք նաեւ Մարկ Անտոնիոյ Կանինիի
Ստուգարանական ուսումնասիրութիւնքը (Et-
tudes etymologiques) տպագրեալ ի 1882 .
ուր մեր լեզուին վրայ այլեւայլ հետաքննու-
թեան արժանաւոր տեղեկութիւնք կան։

(Շարայարդի)

